

ԻՄԱՍՏԱՅԻՆ ՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅՅԵՐՆԵՐԻ
ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

ԱՐԱՄ ԲԱՐԵՋԻՋՅԱՆ

Համանունության առաջացման աղբյուրները բազմազան են: Որպես այդպիսիք նշվում են հնչյունական փոփոխությունները, բառակազմությունը, պատահական զուգադիպությունները, իմաստային փոփոխություններն ու փոխառությունը՝ իրենց զանազան դրսևորումներով: Նյութին վերաբերող մասնագիտական գրականության մեջ նշված աղբյուրներն ուսումնասիրվում են պատշաճ բժախնդրությամբ, սակայն չեն ընդգրկում այլ լեզուներից կատարված իմաստային պատճենումներն ու դրանց վերլուծությունը: Օտար ազդեցությամբ համանունության առաջացման նկարագրությունը սահմանափակվում է փոխառյալ բառերով միայն, որոնք, ենթարկվելով փոխառու լեզվի հնչյունազարդային օրինաչափություններին, մուտք են գործում նրա համանուն շարքերը կամ ստեղծում այդպիսիք. օրինակ՝ 1) քաբ (փոխ. պրսկ.) — պտուղ, ծառապտուղ, նորատունկ ծառի առաջին պտուղը, երախայրիք, 2) բաբ (փոխ. հուն.) — մըթ-նոլորտային ճնշումը չափելու միավոր, 3) բաբ (փոխ. անգլ.) — փոքրիկ ռեստորան, խորտկարան. 1) զով (հայերեն բառ) — ոչ շատ տաք, գաղջ, 2) զով (փոխ. անգլ.) — մարզական տերմին) — զնդակի անցնելը խաղաղարկաստով. 1) տոն (հայերեն բառ) — ռեկէ կարևոր, նշանավոր իրադարձության, դեպքի և այլնի առթիվ կամ հիշատակին նվիրված հանդիսությունների օր, 2) տոն (փոխ. ֆրանս.) — ձայնաստիճան և այլն: Իմաստային տեղաշարժերի հետևանքով առաջացող համանունությունը քննելիս հեղինակները մանրամասն վերլուծում են նրա այն տարատեսակը, որը ներքին իմաստային զարգացման (բազմիմաստության տրոհման) արդյունք է և մեկ այլ լեզվի ազդեցությունից անկախ ներլեզվական երևույթ. օրինակ՝ 1) բազուկ (թև), 2) բազուկ (ճակնդեղ). 1) ծաղիկ (բույս), 2) ծաղիկ (հիվանդություն). 1) մեկնել (զնալ, ուղևորվել), 2) մեկնել (մեկնաբանել, վերծանել, բացահայտել), 3) մեկնել (պարզել, կարկառել). 1) շուֆ (ստվեր), 2) շուֆ (շքեղություն). 1) սուր (հատու), 2) սուր (զենք) և այլն: Ինչ վերաբերում է իմաստային պատճենումների հետևանքով առաջացող համանունությանը, ապա վերջինս կամ մոռացության է մատնվում, կամ էլ որոշակիորեն չի նկարագրվում հայոց լեզվին վերաբերող բառագիտական ուսումնասիրություններում ու դասագրքերում: Այնինչ խմբատարները լեզուների, այդ թվում և հայերենի օրինակները պարզորոշ մասնացույց են անում, որ իմաստային պատճենումները համանունների առաջացման գործուն աղբյուր են, մասնավորապես ներկա պայմաններում, երբ ժողովուրդների միջև գոյություն ունեցող քաղաքական, հասարակական-տնտեսական և գիտամշակութային սերտ կապերը որոշակի դեր են խաղում լեզուների զարգացման մեջ:

Դիմենք գրական արևելահայերենից քաղված օրինակների, որոնք ռուսերենի նմանակությամբ ստացել են նոր նշանակություններ (տե՛ս աղյուսակը):

Բերված օրինակները գոյականներ են, սակայն երևույթը հատուկ է նաև այլ խոսքի մասերի պատկանող բառամիավորներին, մասնավորապես բայերին: Ուշադրություն են գրավում, մասնավորապես, իմաստային լայն ընդգրկում ունեցող բայերը, որոնք ավելի են ենթակա իմաստային պատճենման ճանապարհով նոր նշանակություններ ձևավորելու: Այսպես, զնալ բայը ռուսերենի *знать* բայի հետ ունեցած բազմաթիվ ընդհանուր նշանակությունների հիման վրա պատճենել է վերջինիս ռեբրկայացվել, ցուցադրվել նշանակությունը, որը գործածական է դարձել ինչպես մամուլում, այնպես էլ գեղարվեստական գրականություն մեջ. Ե...թատերա-

1 Ռ. Ն. Շալունց, Համանուն բառերի առաջացման աղբյուրները հայերենում (Ելեզվի: Ի. ՌԵԻ Հարցեր, հ. 3, Երևան, 1975, էջ 63—99): Վ. Դ. Առաքելյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, 1979, էջ 208—215: Ա. Մ. Սուրիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1962, էջ 142—151:

Ռուսերեն բառը և նրա հիմնական նշանակումը թյունները	Հայերեն բառը և նրա հիմնական նշանակումը թյունները մինչև իմաստային պատճենումը	Հայերեն բառի ռուսերենից պատճենած նշանակումը
журавль	կռունկ	
I կռունկ /թռչունը/ խորդ,	կռունկ /թռչունը/, խորդ	
II կռունկ, ամբարձիչ /վերամբարձ կռունկ/		կռունկ. ամբարձիչ /վերամբարձ/ կռունկ
ПОТОК	հոսք	
I 1) հեղեղ, վտակ, գետակ 2) հեղեղ, որն է ուղղորդված թյամբ շարժվող՝ տարածվող զանգված լողի, լույսի, զաղի և այլն/ 3) անընդհատ՝ չընդմիջվող արտադրություն	1) հեղեղ, վտակ, գետակ 2) /Որն է ուղղորդված շարժվող՝ տարածվող զանգված լողի, լույսի, զաղի և այլն/ 3) անընդհատ՝ չընդմիջվող արտադրություն	
II /նորբ./ ուսանող ունկնդիրների բաղմամբ խումբ		ուսանող ունկնդիրների բաղմամբ խումբ
ЯСЛИ	սսուր	
I Երկար տաշտածե տախտակամած, որի մեջ լցնում են անասունների կերը	երկար տաշտածե տախտակամած, որի մեջ լցնում են անասունների կերը	
II մանկամսուր		մանկամսուր
КРЕДИТ	վարկ	
I վարկ, համարում, հարգանք, վստահություն, հեղինակություն	համարում, հարգանք, վստահություն, հեղինակություն	
II /տնտգ. ֆին./ վարկ, զբաղի կամ ապրանքների փոխառվածություն՝ որոշակի պայմաններով։ Որոշակի ծախսերի համար տրված դրամական միջոցները		/տնտգ. ֆին./ զբաղի կամ ապրանքների փոխառվածություն՝ որոշակի պայմաններով։ Որոշակի ծախսերի համար տրված դրամական միջոցները
ЗВЕНО	օղակ	
I ուղիղ և փխր. օղակ, օղակ	ուղիղ և փխր. օղակ	
II որն է միավորման ամենափոքր կազմակերպության օղակ, պիոներական օղակ, զաշտավարական օղակ		որն է միավորման ամենափոքր կազմակերպության օղակ, պիոներական օղակ, զաշտավարական օղակ

շրջաններից մեկում Հաշիբեկովի այդ գործը՝ գնացել է ավելի քան 60 անգամ...»² Բերված օրինակներն արդեն իսկ պարզորոշ մատնացույց են անում. որ հայերեն բառերի ռուսերենից պատճենած նշանակությունները համանուն կապի մեջ են նախորդների հետ: Ի դեպ, ռուսերենն իր հերթին այդ նշանակությունների մի մասը (журналъ, кредит) պատճենել է եվրոպական լեզուներից:

Այսպիսով, միջլեզվային հոմանշությունը դառնում է համանուն նշանակության փոխանցման հիմք: Журналъ և կռուել բառերը միջլեզվային հոմանիշներ են իրենց ելակետային առումով (խորդ), որի հիման վրա ռուսերենից հայերենին է անցել կռուել (ամբարձիշ) նշանակությունը, և հայերենում նույնպես առաջացել նույնարմատ համանունների մի զույգ: Միաժամանակ, միջլեզվային հոմանշության նոր կապ է հաստատվել журналъ և կռուել բառաձևերի միջև ամբարձիշ նշանակությամբ: Նույնը կարելի է ասել մյուս օրինակների մասին:

Քննվող նյութն անմիջականորեն առնչվում է բազմիմաստության և համանունության սահմանազատմանը, որը բառագիտության կենտոտ հարցերից է: Հաճախ դժվար է լինում որոշել սահմանագիծը, որից այն կողմ բազմիմաստությունը վերածվում է համանունության, Սովորաբար նշվում է, որ բազմիմաստ բառի երկու նշանակություններ վերածվում են համանունների, եթե տրոհվում է դրանց միացնող իմաստային շղթան, որի հետևանքով այդ երկու նշանակություններն սկսում են ընկալվել որպես առանձին համանուն բառեր:

Միաժամանակ ակնհայտ է, որ անհատի ընկալումն ու լեզվազգացողությունը, որպես սուբյեկտիվ գործոններ, չեն կարող ճշգրիտ սահմանազատել արժեք ունենալ և տվյալ դեպքում հուսալի ուղեցույց չեն: Բազմիմաստության և համանունության սահմանազատման անհատական ընկալումից բխող կամայական ազատությունն արտահայտվում է զանազան բառարաններում ներկայացվող դասակարգումների տարբերության մեջ: Հետևապես, երևույթի նկարագրությունն անհրաժեշտաբար պահանջում է լեզվաբանական որոշակի շահանիշների կիրառում: Առաջ են քաշվում իմաստային տարբերակման զանազան եղանակներ, առաջնություն է տրվում դրանցից որևէ մեկին: Առավել սպառիչ պատասխան կարող է տալ հնարավոր միջոցների ամբողջությունը, դրանց միազույնարբ: Ինքնին հասկանալի է նաև, որ պետք է առանձնացնել գլխավոր (հիմնական) և երկրորդական (լրացուցիչ) շահանիշներ:

Լեզվական նյութի ուսումնասիրությունը հաստատում է, որ բազմիմաստության և համանունության սահմանազատման համար որոշիչ արժեք ունի նշանակությունների վերլուծությունն ըստ նվազագույն բաղադրիչ տարրերի՝ իմաստությունների, որոնք ի հայտ բերելով նմանություններն ու տարբերությունները, համակցում կամ տարանջատում են բառիմաստային միավորները: Եթե բառի նշանակությունները խմբավորվում են մեկ ընդհանուր իմաստային միջուկի շուրջը, ապա կարելի է խոսել բազմիմաստության մասին: Այլ կերպ ասած, բազմիմաստ բառի տարբեր առումները յուրահատուկ, տարբերակիչ իմաստություններից բացի պետք է ունենան նաև որևէ ընդհանուր իմաստային բաղադրիչ՝ անփոփոխակ, որն ունի իր փոփոխականը՝ բազմիմաստ բառի փոխկապակցված նշանակությունները: Հակառակ դեպքում, երբ նշանակությունները կապված չեն իմաստային որևէ ընդհանուր բաղադրիչով, պետք է ընդունել համանունությունը: Այսպես, կռուել (խորդ) և կռուել (ամբարձիշ) միավորներն իմաստային ընդհանուր բաղադրիչ չունեն: Առաջինի նշանակության համար կարելի է առանձնացնել՝ ա) ջնջված, բ) քաշում հիմնական իմաստությունները, երկրորդի համար՝ ա) անջնջ, բ) գոծիք: Միմյանց բացառող իմաստային բաղադրիչների այս տարբերությունը հիմք է տալիս «կռուել» բառաձևի նշված կիրառությունները դիտել համանուններ և ոչ թե բազմիմաստ բառի տարբեր առումներ: Նույն ձևով կարելի է վերլուծել մյուս օրինակները:

Ըստ իմաստային բաղադրիչների վերլուծությունը կիրառվում է նաև հոմանիշների և հականիշների ուսումնասիրության ժամանակ՝ ընդհանուր, տարբերակիչ և միմյանց բացառող իմաստությունների վերհանման նպատակով: Հոմանշային և հականշային հարաբերությունները, որպես լրացուցիչ միջոցներ, նույնպես որոշակի ճշտում են մտնում բազմիմաստության և համանունության սահմանազատման մեջ: Կռուել բառաձևն իր երկու նշանակություններով կազմում է տարբեր հոմանշային շարքեր՝ կռունկ-խորդ և կռունկ-ամբարձիշ: Միաժամանակ, բերված հոմանիշ շարքերի երկրորդ անդամներն իրենց հերթին որևէ ընդհանուր իմաստային բաղադրիչ չունեն և հոմանշային հարաբերության մեջ չեն (խորդ, ամբարձիշ): Նույն ձևով՝

² «Սովետական Հայաստան», 1. X. 1985:

լարկ-հարգանք-համարում-վստահություն-հեղինակություն և վարկ-գրամական փոխառություն-նպաստ-կանխավճար և այլն: Այս փաստը նույնպես խոսում է համանունության և ոչ թե բազմիմաստության օգտին:

Հակառակին կապի մասին կարելի է ասել հետևյալը. երբ երկու նշանակությունների հականիշները համանշան շարք են կազմում, ապա շեշտվում է բաղմիմաստությունը, հակառակ դեպքում՝ համանունությունը: Ասվածը կարելի է դիտել «զնալ» բայի օրինակի վրա: Եթե նրա հիմնական իմաստային հականիշները՝ զալ, դառնալ, վերադառնալ և այլն, համանշան շարք են կազմում և դրանով իսկ հաստատում ելակետային նշանակությունների փոխադարձ իմաստային կապն ու բաղմիմաստության առկայությունը, ապա ուսերենից պատճենված «ներկայացվել, ցուցադրվել» նշանակության հականիշը՝ չներկայացվելու, չցուցադրվելու գաղափարը հոմանիշ հարաբերությամբ չի կապվում զալ, դառնալ, վերադառնալ բայերի հետ: Հետևապես պատճենված նշանակությունը համանուն հարաբերության մեջ է «զնալ» բայի մյուս նշանակությունների հետ:

Համանունությունը հաստատող լրացուցիչ միջոց պետք է համարել տարբեր ածանցյալների կազմությունը: Նույն կոտնկ բառից առաջին նշանակությամբ կազմվում է կոտնկաձայն, կոտնկաշա, կոտնկան (ազգանունը), իսկ երկրորդ նշանակությամբ՝ կոտնկաշար, կոտնկավոր: Ահմեդը է, որ ածանցյալ բառերի երկու շարքերն իմաստային ընդհանրություն չունեն: Հմմտ. նաև օղակ. օղակազարդ, օղակակար, օղակահյուս, օղակաձև և օղակ, օղակավար (ուհի), օղակավարություն:

Կարևոր են բառի զուգորդելիությունն ու բաշխումային առանձնահատկությունները խոսքաշարում, որոնք սերտորեն առնչվում են բաղադրիչային վերլուծությանը, քանի որ այստեղ ևս ընդհանուր իմաստությամբ առկայությունը պարտադիր է: Եթե միևնույն բառային շրջապատում, որը կարող է ընդգրկել առանձին բառից մինչև մաթողչական խոսքաշարի սահմանները, տվյալ բառաձևի գործածությունը երկու նշանակություններով չի խախտում մտքի իմաստային մաթողչականությունը կամ անհասկանալի չի դարձնում ասույթը, ապա առկա է բաղմիմաստություն, հակառակ դեպքում՝ համանունություն: Օրինակ՝ Կոտնկները ճախրում էին կապույտ երկնքում: Նախադասության մեջ պարզ է, որ կոտնկ գոյականը գործածված է «խորդ» նշանակությամբ, քանի որ «ամբարձիչ» իմաստով չի կարող զուգորդվել ճախրել բայի հետ: Երևույթը կարելի է դիտել ավելի մեծ խոսքաշարում. Երեխան տեսավ մի ֆանի կոտնկ և ճաշվեց դրանք: Նախադասության մեջ հնարավոր է կոտնկ բառաձևի ընկալումը երկու համանուն նշանակություններով, սակայն նախադասությունն ընդարձակելու դեպքում երևան է զալիս ավելի ծավալուն իմաստային ցուցիչ, քան վերևի նախադասության «ճախրել» բայը, որն էլ ի հայտ է բերում նշանակություններից մեկը և բացառում մյուսը, դրանով իսկ հաստատելով համանունությունը. Երեխան տեսավ մի ֆանի կոտնկ, ճաշվեց և ճիսցավ նրանց բաց մոխրագույն փետուրներով: Նախադասության մեջ իմաստային ցուցիչը «բաց մոխրագույն փետուրներով» բառակապակցությունն է: Խոսքաշարի գերը կարևոր է նաև այն առումով, որ եթե համանուն բառերից կազմվում է միևնույն ածանցյալ բառաձևը, ապա շարակարգային հարաբերությունների շնորհիվ կրկին ի հայտ են գալիս տարբերությունները, և բացառվում է երկիմաստությունը կամ թյուրըմբռնումը. Հմմտ. ճոսֆային պարապմունք (պարզ է, որ խոսքը ուսանողական պարապմունքների, դասերի մասին է) և ճոսֆային գիծ, ճոսֆային արտադրություն և այլն:

Ինչպես տեսնում ենք, բաղմիմաստության և համանունության սահմանազատման վերոհիշյալ միջոցները փոխկապակցված են և լրացնում են միմյանց, մի հանգամանք, որ տրամաբանական է դարձնում դրանց համատեղ կիրառումը: Վերոհիշյալ աղյուսակում բերված օրինակներն այս ձևով վերլուծելիս պարզ է դառնում, որ հայերեն բառերի իմաստային պատճենումով ձևեր բերած նոր նշանակությունները ոչ թե բաղմիմաստություն են հաղորդում դրանց, այլ գտնվում են համանուն հարաբերության մեջ: Հետևապես իմաստային պատճենումները պետք է համանունների առաջացման առանձին աղբյուր դիտվեն հայոց լեզվում և, որպես արտաքին ազդեցության հետևանք, որոշակիորեն սահմանադատվեն ներքին իմաստային զարգացման արդյունքը ներկայացնող բաղմիմաստության տրոհման դեպքերից:

Ավելացնենք, որ ի տարբերություն բաղմիմաստության տրոհման, որը երկարատև գործընթաց է, իմաստային պատճենումների միջոցով համանունության առաջացումն անհամեմատ արագ է, որի համարում: Եվ դա բնական է, քանի որ բաղմիմաստության տրոհման համար անհրաժեշտ է, որ երկու նշանակությունները կապով իմաստային միջանկյալ օղակը թուլանա կամ անհետանա, մի փոփոխություն, որ ժամանակ է պահանջում: Այսպես, Պ. Ռոբերի ֆրանսե-

բնն լեզվի հեղինակավոր, բառարանում³ հստակ երևում է ֆրանսերենում credit -վառկ բառի իմաստային զարգացումն ու զրա հետևանքը ներկայացնող համանունության առաջացումը։ Բառը սկզբնապես ունեցել է օվստահություն, որ կարող է ներշնչել որևէ մեկը նշանակությունը, այնուհետև՝ ռեզիդենտություն, օվստահություն, որ կարող է ներշնչել որևէ մեկը հատուցելու, վերադարձնելու առումով, իսկ ավելի ուշ՝ ռեզիդենտության պարտք, փոխառություն՝ որոշակի պայմաններով, որ տրվում է նրան, ով վճարելու, վերադարձնելու օվստահություն է ներշնչում։ Ժամանակի ընթացքում միջազնի է նշանակություններից երկրորդը՝ առաջինը է ներշնչում։ Ժամանակի ընթացքում միջազնի է նշանակություններից երկրորդը՝ առաջինը է ներշնչում։ Ժամանակի ընթացքում միջազնի է նշանակություններից երկրորդը՝ առաջինը է ներշնչում։

Անհրաժեշտ է նշել, որ վերոհիշյալ շարադրանքը չպետք է այն տպավորությունը ստեղծի, թե իմաստային պատճենումներն անխուսափելիորեն հանգեցնում են համանունության առաջացմանը։ Ընդհակառակը, պատճենված նշանակությունները տվյալ բառաձևի մինչ այդ ունեցած նշանակությունների հետ մեծ մասամբ կապվում են բազմիմաստության հարաբերությամբ։ Այդպիսին է, օրինակ, վերոհիշյալ հոսք բառի ռուսերենից պատճենած ժանրերում՝ լրագրող-վոդ առաջագրությունն իմաստը։ Սովետական շրջանում ոչ քիչ թվով հայերեն բառեր, պատճենված համապատասխան ռուսերեն բառերի իմաստային կառուցվածքը, սկսել են գործածվել նոր նշանակություններով կամ նրբիմաստներով, որի արդյունքը եղել է հայերեն բառերի քաղվիմաստային զարգացումը։ Այսպես, անդադարձալ-ազդել, ներդրվել-отразиться, скарзаться (շրջապատը վատ է անդադարձում՝ շրջապատը վատ է ազդում, վատ ազդեցություն է գործում, վատ է ներգործում նշանակությամբ), անցնել (ուսումնասիրել, սովորել, ավանդել, օր.՝ նոր թեմա անցնել)- пройти (новую тему), աշխատագրություն (փխր. որևէ բանի տեղադրման ընդհանուր պատկերը, տարածվածությունը, օր.՝ հյուրախաղերի աշխարհագրությունը, սպասարկման աշխարհագրությունը) - география (гастролей, обслуживания), արբանյակ (արհեստական) - спутник (искусственный), գաղաղաց (մատենաշար) - библиотекa (գրքոցականի գրադարան - библиотека ШКОЛЫМКА (գրքոցական մատենաշար նշանակությամբ), հարվածային (առաջավոր աշխատող կամ սովորող) - ударник, օնոգր (ոճ) - почерк (երգչախմբի ձևագիրը՝ երգչախմբի ոճը, կատարողական արվեստը նշանակությամբ) և այլն։ Ավելացնենք, որ այս նոր նշանակություններից ոչ բոլորն են վերջնական գոյության իրավունք ունենում։

Ինչպես բազմիցս նշվել է լեզվաբանական գրականության մեջ, բառակազմական ածանցն ու վերջավորությունը առանձնաբար չեն փոխառվում։ Դրանց թափանցումը փոխառու լեզու կատարվում է բառի հետ, բառի փոխառության ճանապարհով։ Ճիշտ նույն ձևով նոր նշանակությունների փոխանցումը տեղի է ունենում ոչ թե առանձնաբար, այլ որոշակի բառակապակցությունների մեջ (վերամբարձ կոմուն, ուսանողների հոսք, կոմունիստային, պիոներական օղակ և այլն), և միայն ավելի ուշ, նշանակության ամրանալու դեպքում բառերն օգտագործվում են այդ կապակցություններից դուրս ու կազմում նորերը։

Բազմիմաստությունը համանունությունից սահմանազատելու խնդիրը կարևոր գործնական նշանակություն ունի, մասնավորապես բառարանագրության ասպարեզում, որևէ բառարանի բառացանկը ճշտելիս։ Սակայն, ինչպես արդեն նշել ենք, բառարաններում տրվող դասակարգումները միատեսակ չեն, չկա լեզվական նյութը մատուցելու միատեսակ սկզբունք։ Ինչպես օտար, այնպես էլ ռուսաց և հայոց լեզվի բառարաններում իմաստային պատճենումով առաջացած համանուն բառերի նշանակությունները հաճախ ներկայացվում են մեկ բառահոգվածով՝ որպես բազմիմաստ բառի տարբեր առումներ։ Այնինչ, բառարաններն այս դեպքում առանձին բառահոգվածով պետք է արձանագրեն նոր բառ-համանունի առաջացում և ոչ թե փոխառու լեզվի համապատասխան բառաձևի բազմիմաստության ծավալում։ Խայտառղետ են հայոց լեզվի ու նրան նվիրված բառագիտական աշխատությունների տվյալները։ Այսպես, ժամանակակից հայոց լեզվի քառահատոր և էդ. Աղայանի արդի հայերենի բացատրական բառարաններում վերևում բերված օրինակներից միայն կոմուն բառաձևն է ներկայացվում համանուն բառերի տեսքով։ Մյուս բառերի (գնալ, հոսք, մտուր, վարկ, օղակ) իմաստային պատճենումով ստացած նշանակությունները նախորդների հետ ներկայացվում են միևնույն բառահոգվածի տակ,

³ Paul Robert, Dictionnaire alphabétique et analogique de la langue française, Paris, 1970.

այսինքն դիտվում են բազմիմաստ բառի նոր առումներ: Ավելացնենք, որ ժամանակակից հայոց լեզվի քառահատոր բացատրական բառարանում գնալ և հասնել բառերի նոր նշանակություններն արձանագրված չեն: Մյուս կողմից, եթե Ռ. Շալունցի՝ վերևում նշված աշխատության մեջ մտուր և օղակ բառակերպերն արդեն նշանակություններով դիտվում են համանուն բառեր, ապա Ե. Գևորգյանի ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարանում կոտնել, մտուր և վարկ բառերը տեղ են գտել, իսկ գնալ, հասնել և օղակ բառերը՝ ոչ և այլն:

Վերոհիշյալը հիմք է տալիս պնդելու, որ իմաստային պատճենումներն ու դրանց հետևանքով առաջացող համանունությունը հետագա, ավելի մանրամասն ուսումնասիրության կարիք ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով:

СЕМАНТИЧЕСКИЕ КАЛЬКИ—ИСТОЧНИК ОМОНИМИИ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

АРАМ БАРЛЕЗИЗЯН

Резюме

Среди источников омонимии особое место занимают семантические кальки. Однако они порой остаются вне поля зрения исследователей или не отграничиваются от случаев такого смежного с ними явления, как распад полисемии. В то же время изучение семантических калек неразрывно связано с проблемой разграничения полисемии и омонимии, которая имеет не только теоретическое, но и серьезное практическое значение, особенно в области лексикографии. От ее решения зависит, в частности, ответ на вопрос о структуре словника того или иного словаря. Основным критерием разграничения случаев омонимии от полисемии является принцип семного анализа, а дополнительным критерием служат синонимические и антонимические отношения, наличие разных производных слов, сочетаемость и дистрибуция в контексте. Семантическое калькирование является особым источником омонимии в армянском языке и нуждается в дальнейшем изучении как в общетеоретическом, так и в прикладном плане.